



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի և Կարեն Մեծլումյանի,

քննության առնելով փաստաբանների վերապատրաստման և փաստաբանության կայացման հարցերում Պալատի հետ արդյունավետ համագործակցության փորձ ունեցող կազմակերպություններին Պալատի նախագահի նախաձեռնությամբ՝ պարզեցված կարգով հավատարմագրելու հարցը,

նկատի ունենալով այն հանգամանքը, որ սույն որոշմամբ ներկայացված կազմակերպություններն ունեցել են փաստաբանների վերապատրաստման հավատարմագրեր, որոնց գործողության ժամկետն ավարտվել է,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Պալատի խորհրդի 05.02.2014թ. թիվ 3/7-Լ որոշմամբ հաստատված «Փաստաբանների վերապատրաստում իրականացնող հաստատությունների հավատարմագրման» կարգի 2.6. կետի պահանջներով՝ միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Մեկ տարի ժամկետով հավատարմագրել ներքոնշյալ կազմակերպություններին՝

- **«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն.**
- **Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամ (IRZ).**
- **Ամերիկյան իրավաբանների ընկերակցության (ABA CEELI Inc.) հայաստանյան ներկայացուցչություն.**
- **«Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամ.**

30 ապրիլի 2019թ.

թիվ 8/12-Լ

- **«Մտավոր սեփականության իրավունքի կենտրոն» հիմնադրամ**
- **Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակ.**
- **Միացյալ ազգերի կազմակերպության հայաստանյան գրասենյակ.**

2. Սահմանել, որ՝

- **սույն որոշման 1-ին կետում նշված կազմակերպություններին տրված հավատարմագրերն ուժի մեջ են մտնում 2019 թվականի ապրիլի 30-ից և գործում են մինչև 2020 թվականի ապրիլի 30-ը ներառյալ:**
- **սույն որոշման 1-ին կետում նշված կազմակերպությունները վերապատրաստման դասընթացները և դասընթացավարներին նախապես պետք է համաձայնեցնեն ՀՀ փաստաբանների պալատի հետ:**

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

30 ապրիլի 2019թ.
թիվ 8/12-L
ք.Երևան